

ԴԵՊԻ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ

(Մեծ եղեռնի 80-ամյակի առթիվ)

«Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն,
այլ փրկեա զմեզ ի չարէն»:

Գրիգոր Աբրահամյանի ընտանիքը խիստ իրարանցման մեջ էր: Տունը, որ երկհարկանի էր և ուներ իր համեստ կահավորումն ու մի փոքրիկ այգի, խառնափնթոր վիճակում էր: Սենյակների և տան բոլոր մասերում թափված էին ամեն ինչ. անկողին, հագուստեղեն, աթոռներ... Բացի ընտանիքի տղամարդուց՝ Գրիգորից, որն աշխատում էր Վանի Օրիորդաց վարժարանում որպես վերակացու, բոլորը տանն էին. Սաթենիկը՝ Գրիգորի կինը, և երեք երեխաները՝ յոթ տարեկան Վազգենը, հինգ տարեկան Քարմիլեն ու երեք տարեկան Վարազդատը: Նրանք հագնված էին և կարծես պատրաստվում էին հյուր գնալու: Սակայն դիտողի աչքից չէր վրիպի, որ այս ընտանիքին արտակարգ և արտասովոր անակնկալ է սպասվում:

Հուլիս ամիսն էր, օրը՝ պարզ և շոգ: Կեսօր էր: Սաթենիկն անհանգիստ դուրս ու ներս էր անում: Զգացվում էր, որ նա սպասողական դրության մեջ է: Հանկարծ դուռն ուժգնությամբ բացվեց և ներս մտավ Գրիգորը՝ այլայլված և չափազանց անհանգիստ հոգեվիճակում:

— Տղա՛,—անմիջապես ամուսնուն դիմեց Սաթենիկը,—ի՞նչ ի կասեն:

— Ինչ ի կասեն ո՞րն ի,—վրա բերեց Գրիգորը,—Վանի իշխանավորներ ծածուկ են պախե վերևից էկած գաղթի հրաման, որպեսզի ժամանակ ունենան ուրանց ունեցվածք ծախեն և հետո միայն այդ մասին հայտնեն էս խեղճ ժողովրդին: Եթե ժամանակին հայտնեին էտ մասին, մենք մկա վաղո՞ւց հեռացիր էինք քյաղքեն:

— Քյաղքի մեծ մասն արդեն հեռացիր են,—ասաց կինը,—մնացիր ենք մենք և մի քյանի տուն:

— Թուրքն արդեն քիչ ի մնացե, որ մոտենա քյաղքին: Վան պիտի տատարկվի մինչև իրիկուն: Լաճեր պատրա՞ստ են:

— Խա,—պատասխանեց Սաթենիկը:

—Ամապարեք տուս կյանք: Լուսամուտներ պինդ փակի՞ր ես,—շուրջը նայելով վրա բերեց Գրիգորը:— Վերցրու ամենից անհրաժեշտ պաներ: Մնացածներ մեզ պետք չեն: Կասեն շուտով ետ կուկյանք: Բայց խելքս պան չի կտրե: Էս խմոր շատ ճուր կառնի:

Գրիգոր Աբրահամյանի ընտանիքը ո՛չ ձի ուներ, ո՛չ լծկան եզ, ո՛չ սայլ, որ ունեցվածքը բարձեին: Նրանք ունեին մի կթան կով, որի վրա էլ բարձեցին իրենց համար խիստ անհրաժեշտ իրերը, հագուստեղենը, անուն-դը և այլ պարագաներ:

Կեսօրից բավականին անցել էր արդեն, երբ նրանք, ավարտած հա-մարելով իրենց պատրաստությունները, դուրս եկան տանից, փակեցին դուռը, բանալին դրեցին իրենց համար հայտնի և սովորական տեղում ու միացան գաղթականների անվերջանալի շարանին՝ հույսով լի սակայն, որ շատ շուտով նրանք կրկին կվերադառնան իրենց հարազատ օջախ:

Փոքրիկ Վարազդատին շալակել էր Սաթենիկը, Քարմիլեին՝ Գրիգորը, իսկ Վազգենը նստել էր կովին բարձած իրերի վրա:

Նրանք բավականին հեռացել էին քաղաքից, երբ շշուկներ լսեցին, թե թուրքը շատ մոտ է: Պետք էր շտապել:

— Մարե,—մերթ ընդ մերթ ճանապարհին լացակումած տոնով մորն էր դիմում Վազգենը,—ո՞ւր ի կեթանք:

Շփոթված մայրը չէր կարողանում պատասխան գտնել:

— Շուտով ետ կուկյանք մեր տուն, լո՜ւսս,—փաղաքշական տոնով և գլուխը շոյելով հանգստացնում էր մայրը,—մի լա:

Վանի գաղթականների անծայրածիր շարասյունը, ո՛րը ֆայտոնով, ո՛րը սայլով, ո՛րը ձիով, ո՛րը էշով կամ կթան կովով, ո՛րը ոտքով, քայլում էին օրերով դեպի փրկության ափ, դեպի Արևելյան Հայաստան, դեպի Վա-ղարշապատ՝ Ս. Էջմիածին, սակայն իրենց սիրտն ու հոգին թողնելով իրենց հայրենի հարազատ օջախում:

Շշուկները հաստատվեցին: Թուրքն արդեն մոտ էր հայ գաղթական-ների շարասյանը: Բոլորն անհանգիստ էին: Մի՞թե պետք է ընկնեն ար-յունախում թուրքի երախը, մի՞թե չեն փրկվելու: Բայց և այնպես ժողովրդի այդ անհանգստությունը մի փոքր մեղմանում էր, երբ նրանք տեսնում էին, որ իրենց շրջապատել են և ուղեկցում են և՛ զինված հայ կամավորներ, և՛ ռուս ու կազակ զինվորներ, որոնք ամեն վայրկյան պատրաստ են իրենց կյանքը զոհելու՝ հանուն գաղթականների փրկության:

Գաղթականների շարասյան միջից երբեմն-երբեմն լսվում էր սրտա-ճմլիկ մի երգ՝ «Դլե յաման»:

Վերջապես հայտնվեց թուրքը, ինչպես ժանիքները սրած գազան: Բայց նրանք առայժմ չէին համարձակվում հարձակվել գաղթականների շարասյան վրա՝ նկատելով նրանց ուղեկցող սպառազինված խմբերին: Միայն ժամանակ առ ժամանակ թեթևակի կերպով «անհանգստացնում» էին իրենց հատ ու կենտ կրակոցներով: Բայց, այնուամենայնիվ, այսպես երկար չշարունակվեց: Նրանք սկսեցին թաքստոցներից, բլուրների ետևից, իրենց համար նպաստավոր դիրքերից պարբերաբար հրաձգային հերթեր տեղալ հայերի գլխին: Այդ պահին գաղթականների շարքերում սկսվում էր վայնասուն, խուճապ... Բայց պաշտպանական ջոկատները կանխում էին վերահաս արհավիրքը, անձնազոհաբար նետվում դեպի գիշատիչները և փախուստի մատնում նրանց: Բայց, այնուամենայնիվ, յուրաքանչյուր մար-տից հետո, չհաշված երկու կողմերի կռվողների զոհերը, հայ գաղթական-

ների շարքերում լինում էին կորուստներ. զոհվում ու նահատակվում էին ծերեր, երեխաներ, պարմաններ ու պարմանուհիներ, որոնք դեռևս չէին հասցրել մտնել կյանքի լիարյուն հորձանուտ: Հարազատները չէին կարողանում թաղել իրենց զոհվածներին՝ չկարողանալով ժամանակ գտնել և ապահովություն այդ ցավալի ու խիստ դառն աշխատանքի համար, և միաժամանակ շտապում էին՝ չկտրվելու համար ընդհանուր շղթայից և այդ շղթայի հետ էլ քայլել առաջ, քայլել դեպի փրկություն...

Գաղթականների շարասյունն աչքի էր ընկնում իր մասնատված, բայց ոչ՝ անջատված, հավաքականություններով, գերդաստան առ գերդաստան: Յուրաքանչյուր գերդաստան իր մեջ ներառնում էր մի քանի ընտանիքներ: Այդպես ավելի հարմար էր, որովհետև որևէ անակնկալի դեպքում միմյանց զորավիգ լինելը հեշտ էր:

Անցնում էին օրեր, շաբաթներ... Բայց փրկությունը դեռևս հեռո՞ւ էր ու հեռու: Թուրքերը շարունակում էին պարբերաբար գինված հարձակումները գաղթականների շարասյան վրա՝ պատճառելով նրանց մեծաքանակ կորուստներ:

Գաղթականների մոտ աստիճանաբար սպառվում էր սնունդը: Մեծերը, ճիշտ է, մի կերպ դիմանում էին, սակայն անհուսալի էր վիճակը փոքրերի մոտ: Զգացվում էր, որ վրա է հասնում սովը: Դրան գալիս էր լրացնելու նաև շոգը, հոգնածությունը, տառապալից անքուն գիշերները...

— Մարե,—նվաղած ձայնով հաճախ մորն էր դիմում Վազգենը,—սոված եմ, խաց կուզեմ:

Մայրը խնայողաբար մի-մի փոքրիկ կտոր հաց էր տալիս երեխաներին, որպեսզի կտրի նրանց նվնվոցը և կանխի նրանց նվաղումը:

Գաղթականների ականջներին ամեն լուսաբացի լսելի էր լինում մի ծեր քահանայի ձայն, որ երգում էր «Գթա, Տէր» շարականը:

Օրեցօր շոգը սաստկանում էր: Դրան հակառակ՝ գիշերներն էլ ցուրտ էր անում: Մարդիկ սկսում էին հիվանդանալ: Եվ քանի որ սնունդն էլ վերջանալու վրա էր, կամ շատերի մոտ արդեն վերջացել էր, գաղթականների շարքերում հաճախակի էին դառնում մահացությունները, ավելի հաճախ՝ երեխաների մոտ:

Ժամանակ առ ժամանակ շարասյան առջևից և ետևից լսվում էին հրամաններ.

— Արա՜գ, արա՜գ... շտապե՜ք...

Եվ այդ ձայնից քիչ անց հետևում էին թուրքերի կրակոցները: Նորից իրարանցում, վայնասուն... Եվ շարասյունը քանի գնում, նոսրանում էր...

Վերջին օրերը Գրիգորը և Սաթենիկը դարձել էին խիստ լռակյաց ու մտազբաղ, ավելի հաճախ՝ ջղագրգիռ: Նրանց չափազանց անհանգստացնում էր երեխաների վիճակը:

— Ախչի՛,—կնոջն էր դիմում Գրիգորը,—էն, ինչ որ ես ի կտիանամ, էսոր վերջ չկա: Ես կվախենամ, որ մեր էրեխեք մեր ծեռից էթան:

Երկու փոքրիկները շատ հաճախ էին նվնվում: Նրանց վիճակը շատ լուրջ էր: Իսկ Վազգենն էլ հաճախ էր կրկնում.

— Ես մեր տուն կուզեմ, ես մեր բախչեն կուզեմ...

Գրիգորի եղբայրը՝ Վարդանը, որի ընտանիքը նույնպես նրանց հետ էր գնում, տեսնելով եղբոր ընտանիքի վիճակը, հաճախ մոտենում էր նրանց և հուսադրող ու հանգստացնող խոսքեր ասում.

— Փրկություն հեռու չի, քիչ մնաց, կխասնենք...

Բայց այդ փրկությունը շա՜տ ու շատ հեռու էր:

Փոքրիկ Վարազդատը, որին ծնողները Վարեր էին կոչում, չդիմացավ այս տառապանքին, սովին ու շոգին: Ծնողները ոչինչ անել չկարողացան՝ փրկելու նրա կյանքը: Նա իր կարճատև անմեղ կյանքում կրեց նահատակության պսակը: Ծնողները մի կերպ մի, այսպես կոչված, փոս փորեցին և փոքրիկ Վարազդատի դին ամփոփեցին նրա մեջ:

Գրիգորը և Սաթենիկը շատ ծանր տարան այս բանը: Բայց ինչ արած, պետք էր փախչել, պետք էր փախչել՝ փրկելու համար ողջ մնացած մյուս երեխաներին:

Որոշ տարածություն գաղթականների շարասյունն անցավ առանց որևէ արտակարգ միջադեպի: Բոլորը կամաց-կամաց սկսում էին խաղաղվել: Նրանց արդեն թվում էր, թե ամեն արհավիրք վերջացել է, և իրենք հասել են փրկության ափ:

Բայց այս բոլորը խաբուսիկ անդորր էր: Շուտով կրկին սև ամպեր կուտակվեցին գաղթականների շարասյան գլխին: Երեք կողմերից, բացի փախուստի ճանապարհը, հրացանային համազարկերով թուրքը սկսեց կրակել կարկուտ տեղալ հոգնած, հիվանդ ու հուսահատ գաղթականների վրա: Անասելի, ահավոր ու չտեսնված իրարանցում սկսվեց գաղթականների շարքերում: Մեր ու մանուկ կորցրել էին իրար: Մարդիկ փախչում էին ով որ կողմ կարող էր: Ուժասպառները և ծանր հիվանդները ընկնում էին գետին՝ կրկին վեր կենալու հուսահատ ճիգեր թափելով: Բայց ապարդյուն... Սպանվածների դիակներն արդեն անհաշիվ էին:

Ցավով պետք է ասել, որ այս աղետալի պահին Գրիգորենց լծկան կովը, որի վրա էր բարձված ընտանիքի փրկության հույսը, առաջին իսկ կրակոցներից ուժգին ծառս եղավ, պոկվեց տեղից և վազեց դեպի մոտակա գետն ու ընկղմվեց նրա ջրերում: Բարեբախտաբար ծառս լինելու պահին փոքրիկ Վազգենն ընկավ գետին, եթե ոչ՝ նրա կորուստն անդառնալի կլիներ:

— Ամա՜ն, բալե՜ս,—իրեն կորցրած նվաղած ձայնով աղաղակեց Սաթենիկը:

Այդ տեսնելով Գրիգորն ասես գերբնական ուժ ստացավ, ոստնեց ու մի ակնթարթում երեխային իր գիրկն առավ: Բարեբախտաբար երեխան ոչ մի վնասվածք չէր ստացել:

Այս միջադեպին ականատես էր եղել մի ռուս զինվոր, որը մոտեցավ նրանց և, հանգստացնելով, ասաց.

— Дайте вашего сына я понесу, не беспокойтесь, я не покину вас.

Երբ Գրիգորը ռուս զինվորի խոսքերը հայտնեց կնոջը, վերջինս կըտրականապես հրաժարվեց:

— Իմ բալեն պիտի մնա իմ խետ:

— Ախչի,—կնոջը համոզում էր Գրիգորը,—մեր լաճու փրկության համար ի կասի:

Ռուս զինվորի և Գրիգորի երկար հորդորներից հետո, վերջապես, Սաթենիկը տեղի տվեց: Ռուս զինվորը փոքրիկ Վազգենին գրկեց, դրեց ձիու գավակին և ասաց.

— Не беспокойтесь, я вас найду.

Ինչպես կովը միանգամից և ընդմիշտ անհետացավ ջրի հորձանուտում՝ իր հետ տանելով դեպի փրկություն տանող նրանց ընտանիքի բոլոր հույ-

սերը, այնպես էլ Վազգենը ձիու վրա, ռուս զինվորի հետ միասին, մի ակընթարթում անհետացավ նրանց տեսադաշտից:

... Պաշտպանական ջոկատները ստիպեցին թուրքին լռելու: Այնուհետև սկսվեց մի փոքր դադարի շրջան: Առիթից օգտվելով, գաղթականների խումբը նորից շարժվեց դեպի առաջ: Փոքրիկ Քարմիլեին կրկին իր շալակն առավ Գրիգորը, և տանջահար ամուսինները միացան փախստականների շարանին: Նրանք այլևս ոչինչ չունեին իրենց մոտ՝ ո՛չ սնունդ, ո՛չ վերմակ, ո՛չ տաք ծածկոց և կամ այլ պարագաներ: Կովն այդ բոլորն անդառնալիորեն տարել էր իր հետ:

Անցնում էին օրերը, բայց փոքրիկ Վազգենից ոչ մի լուր:

Թուրքը համարյա չէր անհանգստացնում գաղթականների շարասյանը: Սակայն մի անհավորությանը եկել էր փոխարինելու մի այլ, առավել անհավոր աղետ: Սկսվել էր համաճարակ: Ինչպես եկեղեցում, աշտանակի վրա, հպարտորեն շողշողացող անհամար մոմերն ի վերջո հասնում են իրենց վերջին առկայծումին և վերջալույսին, ճիշտ այդպես էլ գաղթականների շարասյունն օրեցօր և աստիճանաբար նուազում էր ու նուազում: Մարդիկ սկզբում ծանր էին տանում դիակների ներկայությունը, սակայն վերջին օրերը նրանք արդեն համարյա անտարբեր էին դրանց հանդեպ: Գաղթականների անծայրածիր շարասյունից մնացել էր միայն մի փոքր խումբ:

Ճանապարհին այդ անհամար զոհ-նահատակներին գնաց միանալու նաև անմեղ փոքրիկ Քարմիլեն: Ծնողները խիստ հուսահատ վիճակում էին. երկու երեխաները գնացին անդառնալի, երրորդի ճակատագիրն էլ անհայտ է: Գրիգորն ու Սաթենիկն ամբողջ ճանապարհին համարյա չէին խոսում: Միայն Սաթենիկը երբեմն-երբեմն երկու ձեռքերը խփում էր ծնկներին և հառաչում.

— Վախ, վա՜խ...

Այս հուսահատ վիճակում նրանք իրենց վերջին ճիգերն էին թափում՝ որտեղ և ինչ պայմաններում էլ լինի գտնել իրենց կորած որդուն: Մի՞թե ռուս զինվորը վերջնականապես ջնջեց կյանքի հետ կապող նրանց վերջին հույսը...

Գաղթականների շարքերում տարածվել էր նաև մուրացկանությունը: Համարյա դատարկված գյուղերի մոտով անցնելիս անգամ նրանք ոչինչ հայթայթել չէին կարողանում:

Սով էր ու համաճարակ...

Վերջապես, օրեր անց, կրկին հնչեց ծեր քահանայի ձայնը.

— Ի սէր և ի փրկութիւն ազգիս հայոց՝ զՏէր աղաչեսցուք...

Գրիգորի գոտկատեղին մնացել էր մի քանի թուրքական ոսկեդրամ: Այն էլ խնայողաբար պահում էր ավելի նեղ օրվա համար:

Հոգով և մարմնով տառապյալ ամուսինները ինքնամոռաց ու համրաքայլ բնազդորեն գնում էին ուժասպառ գաղթականների խմբի հետ: Հանկարծ վազքով, անսպասելի, նրանց է մոտենում մի փոքրիկ երեխա՝ ցեխոտված ու կեղտի մեջ կորած հագուստների մեջ: Գլխին դրված էր զինվորական մի գլխարկ, որն այնքան մեծ էր, որ ծածկել էր նրա դեմքը: Փոքրիկը բռնում է Սաթենիկի փեշերից և այդպես կախված մնում:

— Հեյ-վա՜խ,—տեսնելով երեխայի խղճալի վիճակը, սրտի խորքից շշուկով արտաբերեց Սաթենիկը:

— Տղա՜, ի՞նչ կուզես,—փաղաքշանքով թափառական երեխային դիմեց Գրիգորը:

Ոչ մի ձայն:

— Տղա՜, տու հա՞մր ես,—բռնելով երեխայի թևը ասաց Գրիգորը:

Նորից ոչ մի ձայն:

— Մի կտոր խաց տուր էտա լաճուն: Չե՞ս տիսնա, անտեր երեխա ի, —խղճահարությամբ ամուսնուն դիմեց Սաթենիկը:

Տղան կպել էր Սաթենիկի փեշերին և պոկ չէր գալիս:

— Առ էսա խաց, կեր,—հացի մի կտոր մեկնելով երեխային դիմեց Գրիգորը:

Բայց տղան համառորեն լռում էր:

Գրիգորի համբերությունը վերջապես սպառվեց: Նա ստիպված եղավ բարձրացնելու երեխայի գլխարկը, որպեսզի նրա դեմքը տեսնի: Երբ բարձրացրեց այն, նույն ակնթարթին ակամայից չոքեց և գրկեց երեխային:

Իսկ փոքրիկի աչքերից առատորեն հոսում էին արցունքները:

Երբ փոքրիկը մի փոքր ուշքի եկավ, հազիվ լսելի ձայնով արտաբերեց.

— Մարե՜, հայրի՜կ... ես մեր տուն կուզեմ, ես մեր բախչեն կուզեմ... ես իմ քուր Քարմիլ կուզեմ, ես իմ ախպեր Վարեր կուզեմ:

Սաթենիկն ուշակորույս ընկած էր գետնին:

Գաղթականների փոքրաթիվ խումբը համարյա մոտ էր Վաղարշապատին՝ Սուրբ Էջմիածնին:

* * *

Դեպքերը տեղի են ունեցել 1915 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին: Պատումի փոքրիկ Վազգենը հայրս է: Փրկությունից հետո, 1918 և 1925 թվականներին, Աբրահամյանների ընտանիքում լույս աշխարհ են գալիս անմեղ նահատակներ Քարմիլեի և Վարազդատի անվանակիցները, որոնցից առաջինը ապրում է Երևանում, իսկ երկրորդը զոհվել է Երկրորդ համաշխարհային պատերազմում, 1944 թվականին:

Տարիներ անց հայրս պատմեց գաղթի մասին և շեշտեց, որ ռուս զինվորը իրեն ոչ թե հանձնել է ճակատագրի քմահաճույքին և հեռացել, այլ խստագույնս պատվիրել՝ նստել ճանապարհի եզրին, որտեղից անցնում էր գաղթականների շարասյունը, և սպասել մինչև ծնողների հայտնվելը: Ռուս զինվորը ստիպված է եղել այդպես վարվել և փոքրիկ Վազգենին թողնել այդ քիչ թե շատ ապահով տեղում, քանի որ ինքը մարտի է բռնվել թուրքերի դեմ պաշտպանական կռիվներին: Հորս փրկիչ այդ բարեհոգի զինվորի հետագա ճակատագրի մասին այլևս ոչինչ հայտնի չէ:

ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ